կ'ըսէ, բայց հազիւ երկու կամ երեք եկեղեցի յիշէ, որոց մէկն յանուն Միքայէլ հրեշտակապետի, շատ մեծ և շատ գեղեցկաշէն։

ՊԱՀՈՒՄԱԼԻՍ. — Այս տեղս յայտնի չէ հիմայ, կ'ըսէ Թարգմանիչն Արուսահլի. իսկ սա յիշէ հոս քանի մի եկեղեցի, որոց մէկն յանուն Ս. Արմենիոսի, որոյ համար Մաքրիզի գրեր է, թէ հնագոյն ճգնաւորաց մէկն է և շատ հռչակաւոր. Ղփտեաց Ցայսմաւուրք քանի մի համանուն՝ Հարմանուս, Հարմանա՝ Սուրբեր յիշեն. գուցէ հնագոյնն ազգաւ Հայ էր և մեր ազգի արեւմտեան անուամբն ճանչցուած և ոչ անձին բնիկ անուամբ։ — Մաքրիզի այլ յիշէ Պու Հարմինա վանքն Բաւ ալ-խարապ կոչուած մեհենատեղւոյ մօտ, ուր շատ հին արձանագիրք կան. յիշեալն այլ անուանին սուրբ ճգնաւոր մ'է։

ԱԼ-ԽՈՒՍՈՒՍ. — Թ.է և ոչ որոշակի, բայց յայտնի է ասոր դիրքն, Սիւյիւդ կամ Ասիուդ գաւառի և մեծ քաղաքին մօտ, որ հին ատեն Սայիտ կ'ըսուէր և ի Յունաց Լիւկոպոլիս, վերին Եգիպտոսի մայրաքաղաք, և հիմայ 30,000-էն աւելի բնակիչ ունի։ «Ի Խուսուս, կ'ըսէ Արու-
»սահլ, Ղփտիք եկեղեցի ունին, Հայք՝
»վանք մի քաղքին մէջ և երկու եկեղեցի,